ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

31 մայիսի չորեքշաբթի 2023
տպագրության ԺԲ տարի

77
(2743)

100 դրամ

քաղ. Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

ՄԳԵՑՎԱԾ ԱՊԱԿԻՆԵՐԸ՝ ԿՌՎԱԽՆՁՈՐ

Մգեցված ապակիների համար տուգանք նախատեսող որոշումը մեղմացնելը մեծ իրարանցում է առաջացրել իշխանական ՔՊԿ ներսում:

Ինչպես հայտնել ենք, հունիսի 1-ից պարեկային ծառայողները եւ ճանապարհային ոստիկանները պետք է հայտնաբերեին ապակիների լուսաթափանցելիության չափի խախտմամբ տրանսպորտային միջոցները եւ վարչական պատասխանատվության ենթարկեին վարորդներին նվազագույն աշխատավարձի քսանհինգապատիկի չափով:

Մինչ այս ընթացքում բոլոր վարորդները հեռացնում էին մեքենաների դիմապակիների վրայի «պլյոնկաները», իշխանությունները մտքափոխվել են: Ներքին քննարկումների արդյունքում հայրենի իշխանությունները որոշել են զիջումների գնալ ու վարորդներին վարչական պատասխանատվության չենթարկել:

Պարզվում է՝ այս որոշումը մեծ դժգոհություն է առաջացրել հենց ՔՊ ներսում: Բանն այն է, որ քննարկումներից անմիջապես հետո ՔՊ-ականների մեծ մասն իրենց մեքենաների ցանցաթաղանթները հեռացրել են, իրենց շրջապատում էլ բոլորին հորդորել հետեւել պահանջին ու մեկ էլ հանկարծ տեղեկանում են, որ իշխանական նեղ շրջանակ իրենք իրենցով հավաքվել ու որոշել են մեղմացնել որոշումը:

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ այդ քննարկումը տեղի է ունեցել հենց Անդրանիկ Քոչարյանի աշխատասենյակում: Քոչարյանն իր գլխավորած ԱԺ հանձնաժողովի անդամների հետ քննարկել ու որոշել են դիմել ոստիկանապետին՝ հորդորելով մեղմ վարվել ու չտուգանել վարորդներին՝ առանց անգամ թիմակիցների հետ քննարկելու կամ գոնե նրանց տեղյակ պահելու: Ընդ որում՝ ՔՊ-ականների համար անակնկալ է եղել այս որոշումը. նրանցից շատերը մամուլից են միայն տեղեկացել այդ մասին:

Եւ այս ինքնագործունեությունը մեծ բունտ է բարձրացրել ՔՊ ներսում, իշխանականների մեծ մասը համարում է, որ սա հետքայլ է իրենց իսկ որոշումներից:

Նախագծի մեղմացմանը հատկապես դեմ է Արթուր Հովհաննիսյանը, որը տարբեր անկյուններում հայտարարում է, թե խայտառակ որոշում էր:

«Ժողովուրդ» օրաթերթը երեկ խորհրդարանում ֆիքսեց՝ ինչպես են Արթուր Հովհաննիսյանը եւ ԲՏԱ նախարարի տեղակալ Ավետ Պողոսյանը (որը Կենտրոնի նախկին թաղապետն էր) բանավիճում այդ հարցի շուրջ:

Վերջիններս խորհրդարանի միջանցքում բարձրաձայն քննարկում էին, թե ով է գաղափարի հեղինակը, եւ ինչու որոշեցին հետքայլ կատարել:

Հովհաննիսյանը վստահեցնում էր, որ ինքը լուծում կտա այս հարցին կառավարության իր խողովակներով: Տեսնենք՝ ինչով կավարտվի այս «սպառնալիքը»:

Ազգային ժողովի «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության պատգամավոր Արսեն Թորոսյանը չի էլ փորձում թաքցնել իր թիմակիցների հետ ունեցած հակասությունները, որոնք սկսեց ի ցույց դնել իր գործունեության ժամանակաշրջանի մասով սկսված քրեական գործի քննության փուլում: Այս անգամ խոսքը նրա ու պատգամավոր Վահագն Ալեքսանյանի հեռակա խոսակցության մասին է: «Ժողովուրդ» օրաթերթը մայիսի 27-ի իր համարում գրել էր, որ ՔՊ խմբակցության պատգամավոր Արսեն Թորոսյանը որքան էլ փորձում է ցույց տալ, որ թիմակիցների հետ լավ հարաբերությունների մեջ է, բայց նա թիմում որպես ընդդիմադիր է ընկալվում: Վահագն Ալեքսանյանը գրառում է կատարել՝ հայտնելով, թե դիմել է ՀՀ ՆԳ նախարար Վահե Ղազարյանին՝ հետաքրքրվելով, թե 2022 թվականին քանի ՃՏՊ է գրանցվել Հայաստանում, եւ դրանցից քանիսի պատճառ է նշված կողային ապակիների լուսաթափանցելիության բարձր տոկոսը: Եվ հենց այս գրառման տակ մեկնաբանություն է թողել Արսեն Թորոսյանը եւ հետաքրքրվել. «Ճի՞շտ եմ հասկանում, որ վաղուց գործող օրենքը կիրառելուն դեմ ես: Եթե ճիշտ եմ հասկանում, էլ ո՞ր օրենքների կիրառմանն ես դեմ, Վահագն ջան»: Նկատենք, որ այս հանգամանքը դարձել է ՔՊ- ում քննարկման առարկա: Թորոսյանը իսկապես միայնակ է մնացել խմբակցությունում, չարացել է կուսակիցների հանդեպ: Անգամ չեն զարմանում, որ հետագայում կարող են նրա ձեռքից վերցնել պատգամավորի մանդատը:

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկությունների համաձայն՝ 1 տոննա հերոին ՀՀ ներմուծելու դեպքով ՀՀ իրավապահ համակարգում ներքին քննարկում է եղել: Մասնավորապես, իրավապահները բարձրացրել են այն հարցը, որ, անկախ այն հանգամանքից, թե 1 տոննա հերոինի մասին ահազանգել է ԱԺ նախկին պատգամավոր Միհրան Պողոսյանը, դա որեւէ կերպ չի փրկում իրեն: Իրավապահ համակարգում կասկածներ կան, որ հերոինը ՀՀ ներմուծողները ինչ-որ հարցում անհամաձայնություն են ունեցել, ու կեղտը ջրի երես է դուրս եկել. հիմա պետք է հասկանալ, թե ով կամ ովքեր ինչ կապ ունեն 1 տոննա հերոինը ՀՀ ներմուծելու հետ: ԱԱԾ-ն սկսել է Միհրան Պողոսյանի եւ նրա ընկերությունների աշխատակիցների կալանավորման գործընթացը: Հուսանք՝ նախաքննական մարմինը այսքանով չի սահմանափակվի, ու հերթը կհասնի «խոշոր ձկներին», քանի որ առանց քաղաքական իշխանության ներսում թիկունք ունենալու 1 տոննա հերոինը չէր կարող մտնել Հայաստան: Նշենք, որ երեկ ԱԱԾ-ն «Մրգենի» ՍՊ ընկերության փաստացի սեփականատիրոջ՝ Միհրան Պողոսյանի, նույն ընկերության տնօրեն Լ.Ա-ի եւ պահեստապետ Ս.Գ-ի նկատմամբ խմբի կազմում, նախնական համաձայնությամբ առանձնապես խոշոր չափերով թմրամիջոց ապօրինի իրացնելու եւ առանձնապես խոշոր չափերով թմրամիջոցի մաքսանենգություն կատարելու համար ՀՀ քրեական օրենսգրքի համապատասխան հոդվածներով հանրային քրեական հետապնդում է հարուցել: Վերջիններիս նկատմամբ, որպես խափանման միջոց, ընտրվել է կալանքը, նախկին պատգամավորի նկատմամբ հայտարարվել է հետախուզում: Հավելենք, որ Պողոսյանի նկատմամբ սա երկրորդ հետախուզումն է. առաջինի հարցում Նիկոլ Փաշինյանի իշխանությունը ձախողեց, եւ Պողոսյանը շարունակում է մնալ ՌԴ-ում, անխռով ապրել, բիզնես անել ուրիշների անուններով եւ անգամ զանգահարել հայրենի իրավապահներին:

⇨ էջ 4

Պարզվում է՝ ՀՀ արտաքին գործերի նախարարությունը մեկ անձից գնումների ջատագով է: Պետական այս կառույցը մայիսի 24-ին պայմանագիր է կնքել «Միլենիում Սվիթ» ՍՊԸ-ի հետ՝ 100 հազար դրամ տրամադրելու, որպեսզի տրանսպորտային ծառայություն մատուցի ՆԱՏՕ-ի ներկայացուցչին: Իսկ «Հասմիկ Բարխուդարյան» ԱՁ-ի հետ կքնված պայմանագիրն էլ 160 հազար դրամ է արժեցել, որով գնվել է հայերեն-ֆրանսերեն համաժամանակյա թարգմանություն: Կրկին թարգմանության ծառայությունների համար ԱԳՆ-ն պայմանագիր է կնքել նաեւ «Անահիտ Ավանեսյան» ԱՁ-ի հետ՝ 180 հազար դրամ արժողությամբ: Չկարողացանք պարզել, թե անուն-ազգանվան համընկնումը ՀՀ առողջապահության նախարար Անահիտ Ավանեսյանի հետ առնչություն ունի, թե ոչ: Արարատ Միրզոյանի ղեկավարած կառույցը Հայաստան ժամանած հյուրերին, բնականաբար, նաեւ հյուրասիրում է, համենայնդեպս, այդ մասին են վկայում այս կառույցի պայմանագրերը: «Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացավ, որ «Յասաման թիմ» ՍՊԸ-ի հետ այս կառույցի կնքած պայմանագիրը կազմել է 1 մլն 754 հազար դրամ, որով 43 անձի համար ճաշ է մատուցվել՝ Ֆրանսիայի ԱԳ նախարարի այցի շրջանակներում: Այդ նույն այցի ժամանակ էլ հյուրանոցային ծառայությունների համար ԱԳՆ արարողակարգի վարչությունը ծախսել է 568 հազար դրամ: Իհարկե, խոշոր գնումներն այսքանով չեն ավարտվում: Օրինակ՝ «Ֆակտորի փրոդաքշն» ընկերությունից ԱԳՆ-ն մոտ 740 հազար դրամի գնումներ է կատարել: Այդ գումարով կառույցը գնել է թղթապանակներ, նոթատետրեր, գրիչներ: Նաեւ «Վինո-Վինո» ՍՊԸ-ի հետ է պայմանագիր առկա՝ 225 հազար դրամի, որով էլ «Ազնավուր» եւ «Դվին» կոնյակներ են գնվել: Այս գնումների մեծ մասն իրականացվում է մեկ անձից գնումների եղանակով: Կարճ ասած, այն, ինչ մերժում էր Արարատ Միրզոյանը, հիմա իրագործում է հաճույքով, առանց ամաչելու:

ԱՐՁԱԳԱՆՔ՝ ԱՐՑԱԽԻՑ

ՀՀ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՀԱԿԱՌԱԿ ՕՐԱԿԱՐԳ

Օրերս Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիեւը, դիմելով արցախահայությանը, հայտարարել էր. «Ձեր գիրքը փակված է, «Միացում» գիրքը փակված է, եկել է անջատողականության վերջը: Անկախության երազանքները գնացին այնտեղ, ուր կարգավիճակը: Իսկ կարգավիճակը մենք դեռ Ղարաբաղյան երկրորդ պատերազմի ժամանակ ուղարկեցինք՝ ուր պետք է: Ղարաբաղի հայերին մնում է մեկ ճանապարհ՝ աղբարկղ նետել կեղծ պետական ատրիբուտները, լուծարել խորհրդարանը եւ ենթարկվել Ադրբեջանի օրենքներին»:

«Ժողովուրդ» օրաթերթը վերոհիշյալ հայտարարության մասին զրուցել է Արցախի խորհրդարանի պատգամավոր Մետաքսե Հակոբյանի հետ:

-Տիկին Հակոբյան, Ալիեւը հայտարարել է, որ Ղարաբաղի հայերին մնում է մեկ ճանապարհ՝ աղբարկղ նետել կեղծ պետական ատրիբուտները, լուծարել խորհրդարանը եւ ենթարկվել Ադրբեջանի օրենքներին: Ինչպե՞ս կմեկնաբանեք նրա հայտարարությունը:

-Ամեն ինչ պայմանավորված է Հայաստանի իշխանությունների գործողություններով եւ վարած քաղաքականությամբ: Բնականաբար, Ադրբեջանի բռնապետի ձեռքերը ավելի ազատ են, եւ եթե մենք համեմատենք մինչեւ 2018 թվականը, ապա բոլորս փայլուն հիշում ենք, որ այդ նույն անձը մինչ 2018-ը ասում էր, որ իրեն փակ սենյակներում ստիպում են ճանաչել Արցախի անկախությունը: Այսինքն՝ մենք ունենք իրավիճակ՝ երբ այդ նույն ներկայումս հոխորտացողը այսկերպ հայտարարություններ էր անում եւ Մադրիդյան սկզբունքների շուրջ բանակցային սեղանին ասում, որ ինքը եւս չի դիտարկում Արցախը Ադրբեջանի կազմում: Ամեն ինչ կտրուկ փոխվեց 2018-ից հետո՝նաեւ պայմանավորված պատերազմում իրենց հաղթանակով, Արցախի եւ Հայաստանի դեմ ճնշումը ավելացավ, իսկ շրջափակման օրերից այդ ճնշումը ավելի մեծացավ: Հայաստանի իշխանությունները չխորշեցին եւ հայտարարեցին, որ իրենք եւս ճանաչում են Արցախը Ադրբեջանի կազմում, նաեւ պատրաստ են զիջումների գնալ Հայաստանի սուվերեն տարածքներից: Սա այն ամենամեծ երազանքն էր, որը նույնիսկ պատկերացնել չէին կարող թե՛ Ադրբեջանը եւ թե՛ Թուրքիան, որ կարող էր երբեւէ իրականություն դառնալ, բայց այն Հայաստանի իշխանությունների աջակցությամբ դառնում է իրականություն:

Մյուս հարվածը Արցախի պետության գլխատումն է՝ փորձելով վերացնել պետական ինստիտուտները:

Մենք բազմիցս հայտարարել ենք, որ մենք ընտրում են պայքարի ճանապարհը, այլեւս որեւէ զիջում չի լինելու, եւ մեր որոշման մեջ որեւէ բան չի փոխվել: Այնպես որ, մեր օրակարգը արդեն վաղուց Հայաստանի իշխանությունների օրակարգին հակառակ է:

-Հայաստանի կողմից Ադրբեջանի տարածքային ամբողջականության ճանաչման եւ Ադրբեջանի այսպիսի հայտարարությունների ֆոնին՝ Արցախի իշխանությունները ի՞նչ են պատրաստվում անել:

-Արդեն երեք ամիս, անկախ այն հանգամանքից, թե ինչ է կատարվում, եւ ինչ քայլերի են գնում Հայաստանը եւ Ադրբեջանը, մենք սկսեցինք բավականին մեծ խմբով աշխատել այլընտրանքային նախագծերի, ծրագրերի վրա: Պետք է հասկանալ, որ մենք իրականում կորցնում ենք Արցախը եւ դրանով վտանգում եւ թուլացնում ենք նաեւ Հայաստանի Հանրապետությունը: Այս հարթակում մենք ստեղծեցինք տարբեր ծրագրեր՝տարբեր սցենարներով մշակված, որտեղ կան եւ՛ ներկայիս իշխանությունների հետ կապված, եւ՛ առանց իշխանությունների: Այս ամենը արդեն մշակված, ձեւավորված է ճակատը, որտեղ մեծ համախմբում կա, եւ դրանք այն իրատեսական ծրագրերն են, որով Արցախը պայքարելու է: Ծրագիրը շուտով հրապարակվելու է, բավականին մեծ ծրագիր է, որը բոլորի համար հասանելի կլինի:

ՍՊԱՌՆԱԼԻՔՆԵՐ

ՆԵՐՔԻՆ ԼՍԱՐԱՆԻ ՀԱՄԱՐ

Ալիեւը վերջերս հերթական սպառնալիքն էր հնչեցրել Արցախի հասցեին՝ պահանջելով լուծարել Արցախի խորհրդարանը. «Խորհրդարանը պետք է լուծարվի, տարրը, որ իրեն նախագահ է անվանում, պետք է հանձնվի, բոլոր նախարարները, պատգամավորները եւ այլք պետք է լքեն իրենց պաշտոնները: Միայն այդ դեպքում նրանց նկատմամբ կարող է ներողամտություն ցուցաբերվել: Միայն այդ դեպքում կարող է խոսք գնալ ինչ-որ համաներման մասին»,- հայտարարել է նա:

«Ժողովուրդ» օրաթերթի հետ զրույցում ՀՀ ԱԺ նախագահ Ալեն Սիմոնյանը, արձագանքելով Ալիեւի սպառնալիքներին, ասում է. «Արցախի համապատասխան պաշտոնյաներն արդեն արձագանքել են նրան. սա բանակցություններից առաջ հերթական սադրիչ հայտարարություններ են, որոնք ստվեր են նետում Ալիեւի՝ ընդամենը ժամեր առաջ արած հայտարարություններին: Ադրբեջանը պետք է պարզաբանի՝ որ ասելիքն է իրական, եւ որ ասելիքն է ներքին լսարանի համար ասվում»,- ասում է նա:

Ք. ՄՈՒՇԵՂՅԱՆ, ՀՈՎՍԵՓ ՀՈՎՍԵՓՅԱՆ

ՄԱՐՈՒԹՅԱՆԸ ԹԻՄ ՉՈՒՆԻ

Մամուլում լուր տարածվեց, որ Երեւանի նախկին քաղաքապետ Հայկ Մարությանը գնացել է Ստեփան Դեմիրճյանի մոտ ու խնդրել, որ Երեւանի ավագանու գալիք ընտրություններին մասնակցի վերջինիս գլխավորած ՀԺԿ ցուցակով, սակայն մերժում է ստացել: Մեզ փոխանցեցին, որ Մարությանի առաջադրումը ցանկանում են կազմակերպել հենց իշխանությունները, որպեսզի գոնե որոշակի մրցակցային ֆոն ստեղծեն Տիգրան Ավինյանի համար:

Մասնավորապես՝ ընտրություններից առաջ անցկացող հարցումները ցույց են տալիս, որ, բացի իշխանական թեկնածուից, այլ մարդու անուն նույնիսկ դժվարանում են հիշել երեւանցիները, ու վտանգ կա, որ Ավինյանի ընտրությունը կարող է անցկացվել շատ պասիվ, մասնակիցների թիվը կարող է չհասնել նույնիսկ 30 տոկոսի: Իշխանական մեր աղբյուրները փոխանցեցին, որ թե՛ ՔՊ-ում, թե՛ Տիգրան Ավինյանի թիմում փորձում են ամեն բան անել, որպեսզի իրենց սպասվող հաղթանակը ստանա մրցակցային շղարշ, իսկ լավագույն թեկնածուն հենց նախկին քաղաքապետ Հայկ Մարությանն է: Վերջինս հիմա զբաղված է իր սիրելի գործով՝ ներկայացումներ տալով, գովազդային հոլովակներում նկարահանվելով, ու չի ցանկանում նորից կոստյում հագնել, գործի գնալ, խնդիրներ լսել, բայց ոչինչ բացառված չէ: Ընդդիմադիր որոշ գործիչներ մեզ հետ զրույցում կարծիք հայտնեցին, որ Մարությանին առաջադրելու համար իշխանությունները եւս մեկ պատճառ ունեն. սրանով ուզում են ցույց տալ, որ, 2018թ.-ի համեմատ, Մարությանի աննշան վարկանիշն արձանագրելով՝ Նիկոլն ու իր թիմն ակնառու կդարձնեն, թե որքան շատ են բոլորն իրենից կախված, ու ինչքան քիչ ձայն կարող են հավաքել նրանք, երբ «հեռանում են» Փաշինյանից:

ԿՄԵԿՆԻ ԵՎՐՈՊԱ

ԱԺ նախագահ Ալեն Սիմոնյանի որոշմամբ՝ «Հայաստան» խմբակցության պատգամավոր, ԵԽԽՎ-ում Ազգային ժողովի պատվիրակության անդամ Արմեն Ռուստամյանը մայիսի 29-ից հունիսի 3-ը գործուղվում է Եվրոպա:

Ընդդիմադիր պատգամավորը մայիսի 29-31-ը Փարիզում կմասնակցի Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովի (ԵԽԽՎ) մոնիտորինգի հանձնաժողովի նիստին, իսկ հունիսի 1-3-ը Լոնդոնում կմասնակցի ԵԽԽՎ մշակույթի, գիտության, կրթության եւ լրատվամիջոցների հարցերի հանձնաժողովի նիստին:

Պատգամավորի գործուղման հետ կապված ճանապարհածախսը (Երեւան-Փարիզ-Լոնդոն), օրապահիկի, ինչպես նաեւ գիշերավարձի ծախսերը (Լոնդոն, 3 գիշեր) կկատարվեն պետբյուջեի հաշվին:

ՔՐԻՍՏԻՆԱ ՄՈՒՇԵՂՅԱՆ

ՊԱՇՏՈՆՆԵՐԸ ԹԱՓՈՒՐ ԵՆ

Մի շարք երկրներում Հայաստանի առեւտրային ներկայացուցիչների պաշտոնները թափուր են մնում. դեռ չի հաջողվում համապատասխան թեկնածուներ գտնել. մայիսի 30-ին՝ Ազգային ժողովում մշտական խորհրդարանական հանձնաժողովների համատեղ նիստին՝ 2022 թվականի պետական բյուջեի կատարման հաշվետվության քննարկման ժամանակ, այս մասին հայտարարեց Հանրապետության էկոնոմիկայի նախարար Վահան Քերոբյանը:

Առեւտրային ներկայացուցիչների թափուր աշխատատեղեր կան Չինաստանում, Գերմանիայում, ԱՄՆ-ում եւ մի շարք այլ երկրներում: «Նախարարությունն, իհարկե, ցանկանում է լրացնել դրանք, բայց զգուշությամբ: Կարեւոր է, որ մարդիկ, որոնք իրենց վրա կվերցնեն այս աշխատանքը, կենտրոնական արդյունքի վրա»,- ընդգծեց Քերոբյանը:

Այսօրվա դրությամբ, ինչպես նշեց նախարարը, Հայաստանն ունի ընդամենը երկու առեւտրային ներկայացուցիչ՝ Առեւտրի համաշխարհային կազմակերպությունում եւ Իրանում: Նախկինում ներկայացուցիչներ կային ԵՄ-ում (նստավայրը՝ Բրյուսել), ինչպես նաեւ առանձին եվրոպական երկրներում: Առեւտրային ներկայացուցիչ կար նաեւ Ռուսաստանում:

«Իրանի հետ ապրանքաշրջանառությունը երկու տարում կրկնապատկվել է: Այնուամենայնիվ, կան բազմաթիվ հանգամանքներ, որոնք խոչընդոտում են հետագա զարգացմանը, ընդ որում՝ եւ օբյեկտիվ, եւ սուբյեկտիվ»,- հավելեց պաշտոնյան:

Նա հստակեցրեց, որ Ռուսաստանում Հայաստանի ներկայացուցիչն, ըստ էության, Վերին Լարսի անցակետում (Վրաստանի հետ սահմանին) մաքսային կցորդն է: Վերջինս զբաղված է ոչ թե հայկական արտահանման խթանմամբ, այլ ընթացակարգային մաքսային հարցերով, ինչպես նաեւ մեքենաների երթեւեկությամբ:

«Ռուսաստանում, որը Հայաստանի համար հսկայական եւ շատ կարեւոր շուկա է, անհնար է արտահանման զարգացումը մեկ անձի հանձնարարել: Այնպես որ, մենք բաց ենք համագործակցության համար բոլոր շահագրգիռ ձեռնարկատերերի հետ, որոնք գործում են ռուսական շուկայում»,- ասաց նախարարը:

Միաժամանակ Հայաստանը շարունակում է աշխատել արաբական շուկայի եւ Ասիայի այլ տարածաշրջանների յուրացման, ինչպես նաեւ եվրոպական, ամերիկյան եւ այլ շուկաներում իր ներկայության ընդլայնման ուղղությամբ:

ՄԻՋՆՈՐԴՈՒԹՅՈՒՆ

ՔՐԵԱԿԱՆ ՀԵՏԱՊՆԴՈՒՄ՝ ՎԱՐՈՐԴԻ ՆԿԱՏՄԱՄԲ

ՀՀ քննչական կոմիտեի Սյունիքի մարզային քննչական վարչությունում քննվող քրեական վարույթի շրջանակներում իրականացված քննչական եւ դատավարական գործողությունների արդյունքում պարզվել են 2023թ. մարտի 10-ին Կապան համայնքի Նորաշեն բնակավայրում տեղի ունեցած մահվան ելքով ճանապարհատրանսպորտային պատահարի մի շարք հանգամանքներ:

2023թ. մարտի 10-ին՝ ժամը 14:10-ին, Կապան քաղաքի 75-ամյա բնակչի կողմից վարած «Պազ 3206-110» մակնիշի ավտոբուսը ուղեւորներով դուրս է եկել երթեւեկելի գոտուց եւ գլորվել գետը: Դրա հետեւանքով 23 ուղեւորները եւ վարորդը՝ տարբեր մարմնական վնասվածքներով, տեղափոխվել են բժշկական կենտրոն, որտեղ ուղեւորներից մեկը ստացած մարմնական վնասվածքներից մահացել է:

Դեպքի առթիվ նախաձեռնվել է քրեական վարույթ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 342-րդ հոդվածի 2-րդ մասի հատկանիշներով:

Նշանակվել են դիակի դատաբժշկական փորձաքննություններ: Հիվանդանոց տեղափոխված 23 ուղեւորները ճանաչվել են տուժող: Քրեական վարույթի շրջանակներում նշանակվել է նաեւ դատաավտոտեխնիկական եւ դատահետքաբանական համալիր փորձաքննություն:

Նախաքննության ընթացքում կատարված վարութային եւ ապացուցողական գործողությունների, այդ թվում նաեւ նշանակված համալիր փորձաքննության արդյունքում հիմնավորվել է, որ 2023թ. մարտի 10-ին՝ ժամը 14:20-ին, 75-ամյա տղամարդը, վարելով իրեն ամրակցված «Պազ 3206-110» մակնիշի ավտոբուսը, ուղեւորվելով Կապան համայնքի Ուխտավայր բնակավայրից, Ուխտավայրի դպրոցի աշակերտներին եւ ուսուցչական կոլեկտիվի անդամներին դեպի Կապան քաղաք տեղափոխելիս, ուշադիր չհետեւելով առջեւում տիրող ճանապարհատրանսպորտային իրադրության զարգացմանը, չընտրելով երթեւեկության համապատասխան անվտանգ ու սահուն ռեժիմ, իրականացրել է իր վարած տրանսպորտային միջոցի ընթացքի ոչ պատշաճ եւ վտանգավոր կառավարում՝ ստեղծելով վթարային իրադրություն: Ավտոբուսը դուրս է եկել ճանապարհի սահմաններից եւ Առաջաձոր բնակավայրի կամրջի մոտ գլխիվայր ընկել Աճանան գետը, ինչի հետեւանքով ուղեւորներից մեկը՝ ուսուցչուհի, ստացած մարմնական վնասվածքներից մահացել է, իսկ մնացած 22 ուղեւորները ստացել են տարբեր աստիճանների մարմնական վնասվածքներ:

Քննությամբ պարզվել է նաեւ, որ ավտոբուսի կառավարելիությունը եւ ընթացքի կայունությունն ապահովող համակարգերը, ագրեգատները եւ դետալները, ղեկային կառավարման ու բանվորական արգելակային համակարգերը, ընթացային մասերը մինչեւ տվյալ պատահարը՝ նախընթաց շահագործման ընթացքում, գտնվել են սարքին վիճակում:

Ձեռք բերված փաստերի հիման վրա՝ վարույթն իրականացնող մարմնի կողմից միջնորդություն է ներկայացվել հսկող դատախազին՝ ավտոբուսի վարորդի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 342-րդ հոդվածի 2-րդ մասով հանրային քրեական հետապնդում հարուցելու վերաբերյալ:

Նախաքննությունը շարունակվում է:

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

ՆՈՐ ՏԵՂԱԿԱԼ

Վարչապետ Նիկոլ Փաշինյանը մայիսի 30-ին որոշում է ստորագրել՝ նոր նշանակում կատարելու մասին:

Որոշման մեջ նշվում է.

«Ղեկավարվելով «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 4-րդ մասով՝ Կարեն Թամազյանին նշանակել Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի նախագահի տեղակալ»:

ԱԿՆԿԱԼԻՔՆԵՐ՝ ՔՆՆԱՐԿՈՒՄԻՑ

Եվրամիության խորհրդի նախագահ Շառլ Միշելը հունիսի 1-ին՝ Քիշնեւում Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանի եւ Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիեւի հետ կայանալիք հանդիպմանն ընդառաջ, գրառում է կատարել «Թվիթեր»-ում՝ հույս հայտնելով, որ հանդիպումը հնարավորություն կտա շարունակել քննարկումները հայ-ադրբեջանական հարաբերությունների կարգավորման գործընթացի վերաբերյալ:

«Արմենպրես»-ի փոխանցմամբ՝ գրառման մեջ մասնավորապես ասվում է. «Ակնկալում ենք Քիշնեւում շարունակել քննարկումները Ադրբեջանի նախագահ Ալիեւի եւ Հայաստանի վարչապետ Փաշինյանի հետ Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ հարաբերությունների կարգավորման շուրջ:

Անհրաժեշտ է վերահաստատել հարգանքը մեկը մյուսի ինքնիշխանության եւ տարածքային ամբողջականության նկատմամբ, առաջխաղացում գրանցել սահմանների դելիմիտացիայի հարցում, ինչպես նաեւ նվազեցնել սահմանային շրջանների ռիսկերը:

Այժմ կենսական է Բաքվի եւ նախկին ԼՂԻՄ տարածքում բնակվող հայերի միջեւ երկխոսությունը նրանց իրավունքների եւ անվտանգության վերաբերյալ:

Կարեւոր է զերծ մնալ առավելապաշտական դիրքորոշումներից եւ ձգտել երկխոսության: Հակամարտության ավելի քան 30 տարիներից հետո ժամանակ է հարկավոր, որ վերքերը սպիանան: Անհրաժեշտ են համարձակ որոշումներ»:

Հայաստանի ու Ադրբեջանի միջեւ խաղաղության շուրջ քննարկումները կշարունակվեն հունիսի 1-ին՝ Քիշնեւում Եվրոպական քաղաքական համայնքի շրջանակներում նախատեսվող հանդիպման ժամանակ: Ակնկալվում է ինչպես եռակողմ՝ Փաշինյան-Միշել-Ալիեւ հանդիպում, այնպես էլ հնգակողմ հանդիպում՝ արդեն նաեւ Գերմանիայի կանցլեր Օլաֆ Շոլցի եւ Ֆրանսիայի նախագահ Էմանուել Մակրոնի մասնակցությամբ:

ՍՊԱՆՈՒԹՅՈՒՆ

ՎԵՆԴԵՏԱ՝ ԵՐԵՎԱՆՈՒՄ

«Ժողովուրդ» օրաթերթին մանրամասներ են հայտնի դարձել մայիսի 29-ին Երեւանում հնչած կրակոցներից: Մասնավորապես՝ 18-ամյա Դ. Թամարյանի սպանությունը խորը արմատներ ունի: Մեզ հայտնի դարձավ, որ իրավապահներին է ներկայացել 26-ամյա Հայկ Մելտոնյանը եւ հայտնել, որ ինքն է կրակել ու սպանել 18-ամյա տղային: Ավելին՝ նա իրավապահներին է հանձնել «Մակարով» տեսակի ատրճանակը, որով մի քանի անգամ կրակել եւ կյանքից զրկել է 18-ամյա տղային:

Իսկ հիմա ամենակարեւորի մասին. ինչո՞ւ է 26 ամյա տղամարդը Երեւանում սպանել 18-ամյա Դ. Թամարյանին:

Իրավապահները պարզել են, որ տարիներ առաջ Վրաստանի Ախալքալաք քաղաքում սպանել են Հայկ Մելտոնյանի եղբորը, եւ այդ սպանության մեջ կասկածվել է 18-ամյա Դ. Թամարյանի հայրը: Տարիներ հետո Հայկ Մելտոնյանը վրեժխնդիր եղավ եւ վենդետա արեց իր եղբոր սպանության համար՝ Երեւանում սպանեց իր եղբորը սպանողի տղային:

Shamshyan.com-ը գրել էր, որ մայիսի 29-ին մարտաֆիլմ հիշեցնող սպանություն է տեղի ունեցել Երեւանում: Ժամը 23:20-ի սահմաններում ՀՀ ներքին գործերի նախարարության ոստիկանության Մալաթիայի բաժին ահազանգ է ստացվել, որ Շահումյան 4 փողոցում՝ «Նեպտուն» համալիրի ավտոկայանատեղիում, կրակոցներ են հնչել, եւ դի կա:

Ինչպես դեպքի վայրից հայտնում են ոստիկաններն ու քննիչները, դեպքի վայրում հայտնաբերել են երիտասարդ տղայի դի, կրակված պարկուճներ ու գնդակ, արնանման հետքեր: Ոստիկանությունն ու քննչական բաժինը պարզում են մահացածի ինքնությունը:

Դեպքի վայրում հավաքված մի քանի քաղաքացիներ, որոնք հրաժարվեցին տեսախցիկի առաջ խոսել, ասում էին, որ սպանվածը 18-ամյա Դ. Թամարյանն է, ում վրա մի քանի անգամ կրակոցներ են արձակել, ու մինչեւ շտապօգնության ժամանումը նա մահացել է:

ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՀԵՏԱԽՈՒՋՈՒՄ

ՄԻՀՐԱՆ ՊՈՂՈՍՅԱՆԸ՝ ՀԵՐՈՒՆԻ ԳՈՐԾՈՎ

ՀՀ ազգային անվտանգության ծառայության քննչական գլխավոր վարչությունում, 2023 թվականի մայիսի 13-ին նախաձեռնված եւ իրականացվող թիվ 58221423 քրեական վարույթի նախաքննության ընթացքում կատարված լայնածավալ քննչական եւ վարութային այլ գործողությունների արդյունքում ձեռք բերված փաստական տվյալների հիման վրա, քննիչի միջնորդությամբ հսկող դատախազի կողմից որոշումներ են կայացվել նաեւ հանցավոր խմբի անդամներ, «Մրգենի» ՍՊ ընկերության փաստացի սեփականատիրոջ Մ.Պ-ի, նույն ընկերության տնօրեն Լ.Ա-ի եւ պահեստապետ Ս.Գ-ի նկատմամբ խմբի կազմում, նախնական համաձայնությամբ առանձնապես խոշոր չափերով թմրամիջոց ապօրինի իրացնելու եւ առանձնապես խոշոր չափերով թմրամիջոցի մաքսանենգություն կատարելու համար ՀՀ քրեական օրենսգրքի համապատասխան հոդվածներով հանրային քրեական հետապնդում հարուցելու մասին: Վերջիններիս նկատմամբ, որպես խափանման միջոց, ընտրվել է կալանքը, Մ.Պ-ի նկատմամբ հայտարարվել է հետախուզում:

Քրեական վարույթով շարունակվում են ձեռնարկվել ծավալուն եւ տարաբնույթ օպերատիվ-հետախուզական եւ վարութային գործողություններ՝ կատարված հանցագործությունների ամբողջական պատկերի բացահայտման, դեպքերի հետ առնչություն ունեցած այլ անձանց ինքնությունները պարզելու, նրանց նկատմամբ հանրային քրեական հետապնդումներ հարուցելու եւ արդյունքում քրեական պատասխանատվության անխուսափելիության սկզբունքն արդյունավետ կենսագործելու ուղղությամբ:

ArmLur.am-ն հայտնել էր, որ, «Ժողովուրդ» օրաթերթի տեղեկությունների համաձայն, Ազգային անվտանգության ծառայությունը 1 տոննա հերոինի գործով ձերբակալությունների եւ կալանավորումների շարք է սկսել:

ԼՈՒՐԵՐ

ՀԱՅՏՆԻ Է ԴԱՏԱՎՈՐԸ

«Ժողովուրդ» օրաթերթը հայտնել էր, որ ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանի որդու եւ 44-օրյա պատերազմի հերոսի մոր միջադեպի գործը ուղարկվել է դատարան: Մեզ հայտնի դարձավ, որ գործը քննելու է Երեւան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Մանվել Շահվերդյանը:

Նշենք, որ հերոսածին մորը մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա, ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանի պետական եւ քաղաքական գործունեության հետ կապված, առեւանգել է վերջինիս որդուն՝ Աշոտ Նիկոլի Փաշինյանին:

Հիշեցնենք, որ մայիսի 20-ին Երեւանի ընդհանուր իրավասության դատարանը՝ դատավոր Ժորա Չիչոյանի նախագահությամբ, որոշում էր կայացրել բավարարել նախաքննական մարմնի միջնորդությունը եւ Գայանե Մարտիրոսյանի նկատմամբ խափանման միջոց ընտրել մեկամսյա կալանքը:

Ք. ՄԱՆՈՒԿՅԱՆ

ԱՆՕՐԻՆԱԿԱՆ ՏԵՂԱՓՈԽՈՒՄ

Պետական եկամուտների կոմիտեի Հարավային մաքսատուն-վարչության Մեղրիի մաքսային կետ-բաժինը շարունակում է անընդմեջ պայքարն Ագարակ պետական սահմանի անցման կետով ապրանքների ապօրինի ներմուծման եւ արտահանման դեպքերի բացահայտման ուղղությամբ:

Վերջին շաբաթվա ընթացքում բացահայտվել են նաեւ ծխախոտային արտադրանքի հետ կապված մի շարք իրավախախտումներ:

Այսպես, Հայաստանից Իրան մեկնող ավտոբուսի հատակի մեջ՝ նախապես պատրաստված թաքստոցից, մաքսավորները հայտնաբերել են 1000 տուփ «HEETS» ապրանքանիշի տաքացվող ծխախոտի գլանակ:

Երեք դեպքերով էլ Իրանից ժամանած բեռնատարների վարորդների խցիկներից ու տրանսպորտային միջոցներից մեկի առաստաղի թաքստոցից հայտնաբերվել է մաքսային հսկողությունից թաքցված 1310 տուփ «Marlboro» եւ «Wisdom» ապրանքանիշի ծխախոտ:

Իրանից ժամանած ՀՀ 3 քաղաքացու մոտ էլ հայտնաբերվել է մաքսային հսկողությունից թաքցված, ինչպես նաեւ չհայտարարագրված ընդհանուր 160 տուփ ծխախոտ: Հիշյալ ծխախոտի մի մասն ամրացված է եղել քաղաքացու մարմնի վրա եւ հայտնաբերվել է անձնական զննման արդյունքում:

Հարուցվել են վարչական վարույթներ՝ «Մաքսային կարգավորման մասին» ՀՀ օրենքի 313-րդ եւ 316-րդ հոդվածների հատկանիշներով:

Մեկ այլ դեպքով էլ Իրանի Իսլամական Հանրապետությունից ժամանած Իրանի քաղաքացու մոտ գտնվող ծխախոտի տուփերում Մեղրիի մաքսային կետ-բաժնի աշխատակիցների կողմից հայտնաբերվել է մաքսային հսկողությունից թաքցված Մեթադոն տեսակի թմրամիջոցի պարունակությամբ 316 դեղահաբ:

ՀՀ քրեական օրենսգրքի 399-րդ հոդվածի հատկանիշներով նախապատրաստված նյութերը փոխանցվել են ՀՀ քննչական կոմիտե:

● *Ըստ ոստիկանության տվյալների՝ մայիսի 29-ից 30-ը Հայաստանի Հանրապետությունում բացահայտվել է հանցագործության 65 դեպք, որոնցից 6-ը՝ նախկինում կատարված:*

ՄԱՐԶ

ՀԱՇՎԱՊԱՀԸ ԴԻՄԵԼ Է ԴԱՏԱՐԱՆ

Քիչ չեն դեպքերը, երբ Տավուշի մարզպետարանի ենթակայությամբ գործող հանրակրթական դպրոցների ու առողջապահական հիմնարկների աշխատողները իրենց խախտված իրավունքները վերականգնելու, հիմնականում՝ աշխատատեղում վերականգնելու պահանջով հայցադիմում են ներկայացնում Տավուշի մարզի առաջին ատյանի դատարան եւ դատարանի վճռով հասնում իրենց խախտված իրավունքների վերականգնմանը:

Հարց է ծագում՝ Տավուշի մարզպետի աշխատակազմում ինչո՞ւ է գործում իրավաբանական բաժին, եթե մարզպետարանի ենթակայությամբ գործող հանրակրթական դպրոցների եւ առողջապահական հիմնարկների տնօրենները խնդրահարույց որոշումներ կայացելիս անհրաժեշտ իրավաբական աջակցություն չեն ստանում մարզպետարանի իրավաբանական բաժնից: Ահավասիկ նման դեպքերից մեկը.

Տավուշի մարզի Մ. Մագուլյանի անվան Բագրատաշենի թիվ 1 միջնակարգ դպրոցի երկարամյա հաշվապահ Մարիամ Նասիբյանի ներկայացուցիչ Ա. Խալաթյանը 2022 թվականի նոյեմբերի 4-ին հայցադիմում է ներկայացրել՝ ընդդեմ Տավուշի մարզի «Մ. Մագուլյանի անվան Բագրատաշենի թիվ 1 միջնակարգ դպրոց պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» ՊՈԱԿ-ի՝ այդ ՊՈԱԿ-ի տնօրենի 2022թ. սեպտեմբերի 6-ի թիվ 61-Ա հրամանն անվավեր ճանաչելու, նախկին աշխատանքում վերականգնելու, հարկադիր պարապուրդի գումարը բռնագանձելու եւ աշխատավարձի վճարման ժամկետանցի համար տույժեր բռնագանձելու պահանջներով:

2022թ. նոյեմբերի 10-ին Տավուշի մարզի առաջին ատյանի դատարանը որոշում է կայացրել հայցադիմումը դատարանի վարույթ ընդունելու եւ պատասխանողից ապացույցներ պահանջելու մասին: 2022թ. դեկտեմբերի 2-ին Բագրատաշենի թիվ 1 միջնակարգ դպրոցի տնօրենը դատարան է ներկայացրել հայցադիմումի պատասխան: 2023 թվականի մարտի 23-ին Տավուշի մարզի առաջին ատյանի դատարանը որոշում է կայացրել ապացուցման պարտականությունը բաշխելու մասին եւ գործին մասնակցող անձանց կողմից ապացույցներ եւ դրանք ձեռք բերելուն ուղղված միջնորդություններ դատարան ներկայացնելու համար տրամադրել է ժամկետ՝ մինչեւ 2023 թվականի ապրիլի 27-ին նշանակված դատական հաջորդ նիստը:

Ապրիլի 27-ին Տավուշի մարզի առաջին ատյանի դատարանի դատավոր Նանա Դալլաքյանը որոշել է սույն քաղաքացիական հայցով նախնական դատական նիստն ավարտել եւ գործով նշանակել դատաքննություն, սույն գործով դատաքննությունը նշանակել հունիսի 27-ին Տավուշի մարզի առաջին ատյանի դատարանի Դիլիջանի նստավայրում:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ
Տավուշ

ՆԱԽԱԳԻԾ

ԱՂՔԻԿՆԵՐԸ՝ ԿԱՄԱՎՈՐ ՁԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐ

Օրենսդրական փաթեթով սահմանվում են կամավոր հիմունքներով պարտադիր զինվորական ծառայություն անցնելու ցանկություն հայտնած իգական սեռի քաղաքացիների կողմից այդ նպատակով դիմելու, նրանց զինվորական հաշվառման, զորակոչի, ծառայության վայրի նշանակման, ծառայության ավարտից հետո պատվովճարի հաշվարկման հետ կապված հարաբերությունները:

Այս մասին ասել է ՀՀ պաշտպանության նախարար Սուրեն Պապիկյանը ԱԺ պաշտպանության եւ անվտանգության հարցերի մշտական հանձնաժողովի մայիսի 30-ի նիստում՝ առաջին ընթերցմամբ քննարկման ներկայացնելով ««Զինվորական ծառայության եւ զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքում լրացումներ եւ փոփոխություն կատարելու մասին» եւ ««Պաշտպանության մասին» ՀՀ օրենքում լրացումներ կատարելու մասին» օրենսդրական փաթեթը:

Ըստ պաշտպանության նախարարի՝ նպատակահարմար է 18-27 տարեկան իգական սեռի քաղաքացիների պարտադիր զինվորական ծառայության ժամկետը սահմանել 6 ամիս. զորակոչը սահմանվել է յուրաքանչյուր տարվա մարտի 1-ին եւ հոկտեմբերի 1-ին:

Կհստակեցվեն նրանց կողմից կամավոր հիմունքներով պարտադիր զինվորական ծառայություն անցնելու դիմումների ներկայացման ժամկետները, որպեսզի հնարավոր լինի պատշաճ կարգով եւ ժամկետներում իրականացնել նրանց զինվորական հաշվառման՝ ներառյալ անհրաժեշտ բժշկական հետազոտությունների եւ փորձաքննության գործընթացը:

Նշվել է, որ նախագծով սահմանվում են զորակոչի կազմակերպման առանձնահատկությունները, ինչպես նաեւ մինչեւ պարտադիր զինվորական ծառայության զորակոչվելն իգական սեռի քաղաքացիների կողմից պարտադիր զինվորական ծառայություն անցնելուց հրաժարվելու հնարավորությունը, այդ քաղաքացիներին ծառայության վայր նշանակել առանց վիճակահանության՝ նախանշված ուսումնական զորամասեր:

Սահմանվում է նաեւ պարտադիր զինվորական ծառայության ընթացքում նրանց կողմից պայմանագրային զինվորական ծառայություն անցնելու հնարավորությունը: Պարտադիր զինվորական ծառայությունն անցնելուց հետո նրանց համար, ՀՀ կառավարության որոշման համաձայն, նախատեսվում է պատվովճար՝ 1 մլն դրամի չափով:

Ըստ Սուրեն Պապիկյանի՝ իգական սեռի ներկայացուցիչները ծառայությունից հետո կհամալրեն պահեստազորի կազմը եւ անհրաժեշտության դեպքում կզորակոչվեն:

Հարակից զեկուցող, հանձնաժողովի անդամ Վիլեն Գաբրիելյանը կարեւորել է նախագծի ընդունումը, ինչը, ըստ նրա, նոր մրցակցային դաշտի հնարավորություն է ընձեռում:

ԱԺ պաշտպանության եւ անվտանգության հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ Անդրանիկ Քոչարյանի հավաստմամբ՝ նախագծերի փաթեթով կարեւոր քայլ է կատարվում Զինված ուժերի բարեփոխումների ուղղությամբ: Ըստ նրա՝ այն հնարավորություն կընձեռի բարձրացնել բանակի որակական ցուցանիշները:

Ըստ հանձնաժողովի նախագահի տեղակալ Արմեն Խաչատրյանի՝ նախագիծը համարձակ նախաձեռնություն է եւ այն կմոտիվացնի տղամարդկանց՝ բանակում ծառայելը:

Հանձնաժողովի անդամ Արփինե Դավոյանի համոզմամբ՝ օրենսդրական փաթեթով կարեւոր բարեփոխում կիրականացվի բնագավառում:

Բանակի վերաբերյալ իր տեսակետն է ներկայացրել հանձնաժողովի անդամ Գեղամ Մանուկյանը:

Քննարկման արդյունքում օրենսդրական փաթեթը ստացել է հանձնաժողովականների դրական եզրակացությունը: Առաջարկվել է հարցն առաջիկա լիագումար նիստում քննարկել 24-ժամյա ռեժիմով:

ԱՊԱԿԻՆԵՐԻ ՄԳԵՑՈՒՄ

ԲՈՂՈՔԻ ԱԿՑԻԱ՝ ԵՐԵՎԱՆՈՒՄ

Մի խումբ վարորդներ երեկ՝ մայիսի 30-ին, բողոքի ակցիա են իրականացրել Երեւանում՝ դժգոհելով ավտոմեքենաների կողային ապակիների լուսաթափանցելիության վերաբերյալ որոշումից:

«Մենք անհամաձայնություն ունենք, քանի որ ապրում ենք շատ շոգ երկրում, պլյոնկաները պոկած՝ առաջին հերթին վառվում ենք ահավոր: Բացի այդ, գողությունները կշատանան, քանի որ երեւալու են մեքենայի սրահում եղած իրերը: Պատճառաբանությունը, թե պարեկները գիշերով չեն տեսնում՝ վարորդն ամրակապված է, թե ոչ, պատրվակ է ժողովրդին տուգանելու համար: Փաշինյանն ասում էր, Հայաստանում 3 մլն վարչապետ գոյություն ունի, եւ նրանք կարող են որոշում կայացնել: Ո՞ւր է: Հիմա ընդամենը մի հոգի կաբինետում որոշում է կայացնում, ինքն էլ, իր համար կոնդիցիոները միացրած, մեքենայի հետեւում հով-հով ման է գալիս, չի մտածում, որ, օրինակ, վարորդ կա՝ առավոտից իրիկուն տաքսի է քշում: Էդ մարդը արեւի տակ ինչպե՞ս կարող է երկար վարի: Հնարավոր է՝ արեւից ալերգիա ունի: Մարդիկ էլ արեւի տակ կանգնելուց գլխացավ են ունենում, քթից արյուն է գալիս, հիմա ինչ՝ օրենք հանեն, որ ով չի կարող արեւի տակ կանգնի, վարորդական իրավունք չստանա՞»,-ասաց ակցիայի մասնակից վարորդը:

Մեկ ուրիշն էլ նկատեց, որ համաձայն չէ որոշման հեղինակների հետ, թե առանց մգեցված դիմապակիով քշելը վարորդին օգնում է: Հակառակը, շատ դեպքերում խանգարում է, քանի որ գիշերը վարելիս դիմացից կամ կողքից եկող մեքենաների լուսարձակների լույսը վարորդներին կարող է կուրացնել:

Վարորդները պահանջում են կամ չեղարկել այդ որոշումը, կամ մգեցման թույլատրելիության շեմը հասցնել 60-70 տոկոսի:

● *Անցած 1 օրվա ընթացքում հանրապետությունում արձանագրվել է 15 ՃՏՊ. 22 մարդ ստացել է տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:*

ԼՈՒՐԵՐ

ԱՇԽԱՐՀԻ ՆՈՐ ՉԵՄՊԻՈՆ

Տոկիոյում կայացած կուդոյի աշխարհի 6-րդ առաջնությանը մասնակցել են նաեւ Հայաստանի կուդոյի ֆեդերացիայի սաները: Մեր մարզիկները հաջող են հանդես եկել եւ գրավել են տարբեր մրցանակային տեղեր: Այս մասին հայտնել են Հայաստանի կուդոյի ֆեդերացիայից:

Ընդհանուր առմամբ, կուդոյի աշխարհի 6-րդ առաջնությանը մասնակցել է 250 մարզիկ աշխարհի տարբեր երկրներից:

Հայաստանի հավաքականի ներկայացուցիչ Գոռ Նալբանդյանը զբաղեցրել է առաջին մրցանակային տեղը, Ալեքսանդր Չարխչյանը զբաղեցրել է երկրորդ մրցանակային տեղը, Հայկ Կիրակոսյանը՝ 3-րդն էր, իսկ Դանիել Հակոբյանը՝ 4-րդը:

Կուդոն ժամանակակից կոնտակտային մարտարվեստ է, որը ստեղծվել է 1981 թվականին՝ Ազումա Տակաշիի կողմից: Պարունակում է Կիոկուշին կարատեի, ձյուդոյի, թայ-բռնցքամարտի տարրեր:

Համարվում է դինամիկ զարգացող մարզաձեւ: Կուդոն՝ որպես մարտարվեստ, օլիմպիական մարզաձեւերում ընդգրկվելու հավակնորդ է:

ԹՌԻՉՔ ԴԵՊԻ ԿԱՊԱՆ

Մոտ ժամանակներս դեպի Կապանի օդանավակայան 2-րդ թռիչքը կիրականացվի: Այդ մասին ԱԺ-ում 2022-ի բյուջեի կատարողականի հաշվետվության քննարկումների ժամանակ հայտարարեց ՏԿԵ նախարար Գնել Սանոսյանը՝ հիշեցնելով, որ 1 թռիչք արդեն իսկ իրականացվել է:

«Մեկ օդանավ կա, որը հիմա էլ է պատրաստ (թռիչքի-խմբ.): Մենք 1 տեխնիկական թռիչք իրականացրել ենք, մենք այդ ընթացքում որոշակի մասնագիտական խնդիրներ ենք նախանշել, հիմա այդ ուղղությամբ աշխատանք ենք տանում: Տեղեր կան՝ նավիգացիոն համակարգում է պետք բան փոխել, տեղ կա՝ ինչ-որ սարքավորում է պետք ավելացնել»,- ասաց նախարարը եւ տեղեկացրեց, որ մոտ ժամանակներս 2-րդ թռիչքն է նախատեսվում իրականացնել:

Բայց հնարավոր է՝ ինքնաթիռը Կապանում վայրէջք չկատարի, «որովհետեւ այն խնդիրները, որոնք հայտնաբերվել են, օդանավակայանում չեն, մինչեւ օդանավակայան գոտում են, եւ հիմա 2-րդ թռիչքը կիրականացնենք, որպեսզի տեսնենք, որ մեր արած սարքավորումների տեղադրումից հետո այդ խնդիրները վերացել են»:

Գնել Սանոսյանը նաեւ ընդգծեց, որ վերջնանպատակը կանոնավոր ուղեւորափոխադրում ունենալն է:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ 4

ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ԾԱՆՈՒՑՈՒՄ

«Բի էս Թի» ՍՊԸ-ն (այսուհետ՝Կազմակերպիչ) «ԵՐԵՎԱՆԻ ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ԲՈՐՍԱ» ՍՊԸ -ի հարթակում իրականացնելու է բաց աճուրդ համապատասխան փուլերով՝ «դասական» (գնի բարձրացմամբ), այնուհետեւ «հոլանդական» (գնի նվազեցմամբ) եղանակներով: Աճուրդի ընթացքում վաճառվելու են «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ-ին (այսուհետ՝բանկ) գրավի իրավունքով պատկանող հետեւյալ լոտերը՝

- Լոռու մարզ, ք. Ստեփանավան, Մուրացանի 24 հասցեում գտնվող 192,5 ք.մ. բնակելի տուն, 220,0 ք.մ. ավտոտնակ, 112,2 ք.մ. ամառային խոհանոց, 6,6 ք.մ. պարիսպ եւ 0,0978 հա հողամաս: Լոտի մեկնարկային գինը՝26040000 ՀՀ դրամ:
- ք. Երեւան, Նուբարաշեն, Նուբարաշենի 11 փողոց, 1/5 հասցեում գտնվող 56,5 ք.մ. խանութ եւ 0,00849 հա հողամաս: Լոտի մեկնարկային գինը՝23940000 ՀՀ դրամ:

Լոտերի նկատմամբ սահմանափակումներ՝գույքերը գրավադրված են:

Աճուրդի փուլերը՝ք. Երեւան, Սայաթ-Նովա պողոտա, 40 շենք, թիվ 82/31 հասցեում 16.06.2023թ.-ին, ժ. 12:00-ին դասական եղանակով, այնուհետեւ յուրաքանչյուր աշխատանքային օր, նույն վայրում, նույն ժամին՝ հոլանդական եղանակով: Աճուրդի ավարտը՝ 29.12.2023թ.-ին:

Աճուրդի մասնակցության նախավճարը սահմանված է համապատասխան գույքի ընթացիկ մեկնարկային գնի 1%-ի չափով, որի վճարման վերջնաժամկետը սահմանված է յուրաքանչյուր աճուրդի փուլի օրվան նախորդող աշխատանքային օրվա ժամը 16:00-ն: Նախավճարը վճարվում է «Բի էս Թի» ՍՊԸ -ի դրամարկղումաճուրդի կայացման հասցեում, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կանխիկի շեմը չգերազանցելու դեպքում, կամ բանկային հաշվին («Արդշինբանկ» ՓԲԸ-ում 2470103374150000 հաշվեհամարին), կամ կազմակերպչի կողմից տրված այլ հաշվեհամարին: Աճուրդին մասնակցելու համար անհրաժեշտ է ներկայացնել՝ ֆիզիկական անձանց համար անձը հաստատող փաստաթուղթ եւ Կազմակերպչի կողմից տրված մասնակցի վկայական (այսուհետ՝աճուրդի վկայական), որը հաստատելու է նաեւ նախավճարի մուծման փաստը, իսկ իրավաբանական անձանց համար՝կանոնադրությունը, իրավաբանական անձանց պետական գրանցման վկայականը, պաշտոնատար անձի կամ ներկայացուցչի լիազորությունները հաստատող փաստաթուղթ եւ աճուրդի վկայական:

Աճուրդում հաղթող է ճանաչվում այն անձը, ով առաջարկել է ամենաբարձր գինը: Վերջին ամենաբարձր գնային հայտ ներկայացրած մասնակիցը, աճուրդավարի մուրճիկի երրորդ հարվածից հետո, համարվում է աճուրդում հաղթած մասնակից: Աճուրդին մասնակցած, սակայն չհաղթած անձի մուծած նախավճարը վերադարձվում է աճուրդն ավարտվելուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում: Նախավճարը ենթակա է վերադարձման, եթե աճուրդը համարվում է չկայացած: Եթե աճուրդում հաղթող ճանաչված անձը հրաժարվում է ստորագրել արձանագրությունը կամ առուվաճառքի պայմանագիրը, ապա նա կորցնում է իր մուծած նախավճարը: Եթե Կազմակերպիչը հրաժարվում է ստորագրել արձանագրությունը, ապա նա պարտավոր է աճուրդում հաղթող ճանաչված անձին վերադարձնել նախավճարը:

Նախքան աճուրդի ավարտն աճուրդային լոտի նկատմամբ բանկի գրավի կամ սեփականության իրավունքի դադարման հետեւանքով աճուրդի մասնակիցների կորուստների եւ վնասների համար բանկը որեւէ պատասխանատվություն չի կրում:

Լոտերն ուսումնասիրելու ցանկություն հայտնած անձինք կարող են սույն ծանուցման օրվան հաջորդող օրվանից մինչեւ աճուրդի ավարտի նախորդող օրը, յուրաքանչյուր աշխատանքային օր, ժ. 10:00-ից մինչեւ 18:00-ն, այցելել վերը նշված հասցեներով եւ ծանոթանալ լոտերի հետ՝ այցելությունը նախապես համաձայնեցնելով Կազմակերպչի եւ Բորսայի հետ: Հարկային գործակալ հանդիսանալու դեպքում աճուրդում հաղթած մասնակցի կողմից լոտի գնի վճարելու կարգը սահմանվում է վաճառողի հետ՝ փոխհամաձայնեցված ժամկետներում: Սույն ծանուցումը կարող է փոփոխվել մամուլում հրապարակվելու միջոցով: Աճուրդների անցկացման կանոնակարգին, լոտերի ամբողջական ցանկին կարող եք ծանոթանալ եւ անվճար ստանալ կանոնակարգի պատճենը, դիմելով Կազմակերպչին եւ Բորսային՝ ք. Երեւան, Սայաթ-Նովա պողոտա, 40 շենք, թիվ 82/31 հասցե: Բոլոր այլ տեղեկությունների համար կարող եք զանգահարել (011) 56-45-13 հեռախոսահամարով կամ այցելել www.llcbst.am, www.borsa.am կայքեր:

ԼՈՒՐԵՐ

ԱԴՐԲԵՋԱՆԻ ⇨ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԾԱԽՍԵՐԸ

2023 թ.-ին Ադրբեջանի կառավարությունը բյուջեից 1,1 միլիարդ մանաթից (650 միլիոն դոլար) ավելի լրացուցիչ գումար կհատկացնի պաշտպանական կարողությունների եւ ազգային անվտանգության ամրապնդման համար:

Ինչպես «Արմենպրես-ը տեղեկանում է TACC գործակալությունից, այս մասին հայտնել են Ադրբեջանի ֆինանսների նախարարության մամուլի ծառայությունից:

Նախատեսվում է լրացուցիչ 1,11 միլիարդ մանաթ հատկացնել երկրի պաշտպանունակության եւ ազգային անվտանգության ամրապնդման համար, այդ թվում՝ 1 միլիարդ մանաթ (588 միլիոն դոլար) հատուկ նախագծերի եւ պաշտպանական նշանակության միջոցառումների համար»,- հայտնել է գերատեսչությունը:

Ադրբեջանի ֆինանսների նախարարության տվյալներով՝ գումարի ավելացումից հետո հատուկ նախագծերի եւ պաշտպանական միջոցառումների համար ծախսերը կկազմեն 3,07 մլրդ մանաթ (1,81 մլրդ դոլար):

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ

Այս տարի ամբողջությամբ կապահովվի կարտոֆիլի ներքին պահանջարկը, սակայն կարտոֆիլի արտահանման հետ կապված կարող են խնդիրներ առաջանալ: Այս մասին լրագրողների հետ զրույցում ասաց գյուղատնտեսության նախկին փոխնախարար Գառնիկ Պետրոսյանը:

Դժվարություններ, նրա խոսքով, կարող են առաջանալ Վերին Լարսի անցակետում հայկական գյուղմթերքի արտահանման համար արհեստական խոչընդոտներ ստեղծելու փորձերի տեսանկյունից:

Փորձագետը խնդիրներ է կանխատեսում նաեւ ցորեն արտադրողների համար՝ Ռուսաստանից էժան սպառողական հացահատիկի ներմուծման ֆոնին: «2023 թվականին Հայաստանում ծիրանի բերքը կլինի միջինից ցածր մակարդակի վրա»,- կարծում է նա: Պետրոսյանը նշեց, որ դրա պատճառն են չոր աշունն ու ձմեռը, ինչպես նաեւ ապրիլյան ցրտահարությունները: Նա տեղեկացրեց, որ գյուղացիները վստահ չեն խաղողի իրացման հարցում, քանի որ ալկոհոլային արտադրանք արտադրողները չեն շտապում նրանց հետ պայմանագրեր կնքել:

Նախկին պաշտոնյան միաժամանակ ակնկալում է, որ խաղողի բերքը կլինի միջին մակարդակի վրա:

«Ժողովուրդ» օրաթերթում եւ Armlur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ

ՄԱՆՍՈՒՐՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՄՐՑՈՒՅԹԻ ՀԱՂԹՈՂԸ

Ամփոփվել են Տիգրան Մանսուրյանի անվան կոմպոզիտորների միջազգային 1-ին մրցույթի արդյունքները: Ինչպես տեղեկացրին Տիգրան Մանսուրյանի անվան կոմպոզիտորների միջազգային մրցույթի կազմակերպչական խմբից, ժյուրիի որոշմամբ՝ 1-ին մրցանակի արժանացել է Իվան Բուշուեւի (Ռուսաստան) հեղինակած ստեղծագործությունը, 2-րդ տեղը գրավել է Արսեն Բաբաջանյանը (Հայաստան-Գերմանիա), 3-րդ մրցանակը ստացել է Վարդան Հարությունյանը (Հայաստան): «Կողբ» հիմնադրամի համակրանք» անվանակարգում մրցանակ շնորհվել է Ալինա Պոդգորովային (Ռուսաստան):

Հրավիրված գալա համերգի ընթացքում ստեղծագործությունները ներկայացվել են «Ասոնանս» անսամբլի կատարմամբ: Իվան Բուշուեւը մրցանակաբաշխությունից հետո նշեց, որ երջանիկ է, որ իր երաժշտությունը հնչել է մրցույթի գալա համերգի ընթացքում: Նա ընդգծեց, որ ուրախ է, որ իր մեծ կապերը հայ ժողովրդի ու հայկական մշակույթի հետ կարողացավ արտահայտել երաժշտության միջոցով:

Հիշեցնենք, որ մրցույթը կազմակերպել էր «Կողբ» հիմնադրամը. այն միտված է միավորելու տաղանդավոր կոմպոզիտորներին աշխարհի բոլոր ծայրերից՝ ստեղծելով յուրահատուկ հարթակ, որտեղ կմիաձուլվեն երաժշտությունն ու գրականությունը: Մրցույթի նպատակը տաղանդավոր երաժիշտների բացահայտումն է, արդի պոեզիայի հանրահռչակումը, հայ գրի, խոսքի արժեւորումն աշխարհին ամենահասանելի լեզվի՝ երաժշտության միջոցով:

Մրցույթի գլխավոր հովանավորներն էին FastBank-ը եւ FastShift ընկերությունը, հովանավորներն էին Team Telecom Armenia եւ «Տրանսիմպեքս» (FedEx) ընկերությունները»,- ասվում է հաղորդագրության մեջ:

Ըստ աղբյուրի՝ ժյուրիի նախագահ Արամ Հովհաննիսյանը նշել է, որ մրցույթը հնարավորություն տվեց եւս մեկ անգամ հասկանալու, որ հայոց լեզուն ունի շատ թաքնված դռներ, այն մեծ ասելիք ունի նաեւ կոմպոզիտորի համար, որը փնփրտուքների մեջ իրեն նորովի է բացահայտում: Նա վստահություն հայտնեց, որ մրցույթի շրջանակներում գրված ստեղծագործությունները երկար կապրեն տարբեր համերգային բեմերում՝ գրավելով ունկնդրի սրտերը: «Կողբ» հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի անդամ Արման Բարսեղյանն ընդգծել է, որ հիմնադրամի համար մեծ պատիվ է Մանսուրյանի անվան մրցույթի կազմակերպիչ լինելը: Նրա խոսքով՝ մրցույթի նպատակներից էր նաեւ Հայաստանում մշակութային ակտիվությանը նպաստելն ու աշխարհի մշակութային քարտեզի վրա Երեւանն ու Հայաստանն ավելի տեսանելի դարձնելը: «Մաեստրո Մանսուրյանը մրցույթի փակման արարողությանը նկատեց, որ իր մեծագույն սերը եղել են Կոմիտասը, հայկական պոեզիան՝ 5-րդ դարից մինչեւ Եղիշե Չարենց ու Համո Սահյան, եւ ամիսներ առաջ լսելով մրցույթի նախաձեռնության մասին՝ առաջարկել էր այն կազմակերպել՝ առանցքում ունենալով հայերենը»,- հայտնում են մրցույթի կազմակերպչական խմբից: Մանսուրյանի անվան մրցույթին դիմել էին 13 երկրի 24 կոմպոզիտորներ: Ժյուրիի գնահատման արդյունքում եզրափակիչ փուլ էին անցել 6 կոմպոզիտորներ, որոնք էլ պայքարում էին հաղթողի կոչման համար:

Մրցույթին դիմած բոլոր մասնակիցները ներկայացրել էին մեկ վոկալ-գործիքային ստեղծագործություն կամ շարք՝ գրված ձայնի եւ մեկ կամ երկու գործիքի համար: Բոլոր ստեղծագործությունները գրված են եղել հայ միջնադարյան, դասական կամ ժամանակակից պոեզիայի հիման վրա:

ՇՐՋԱԳԱՅՈՒԹՅՈՒՆ

ՀԻՍՈՒՍԻ ՄԱՍԻՆ ՖԻԼՄ ԿՆԿԱՐԱՀԱՆՎԻ

Կաննի կինոփառատոնից հետո Մարտին Սկորսեզեն շրջագայության է մեկնել Իտալիա, որտեղ հանդիպել է Հռոմի պապ Ֆրանցիսկոսի հետ եւ հայտարարել, որ ֆիլմ է նկարելու Հիսուսի մասին. այս մասին հայտնում է Variety-ն:



«Ես արձագանքեցի արվեստագետներին ուղղված Հռոմի պապի կոչին ինձ հայտնի ձեւով՝ հորինելով եւ գրելով սցենար Հիսուսի մասին ֆիլմի համար, եւ ես պատրաստվում եմ սկսել նկարահանել այն»,- ասել է Սկորսեզեն Վատիկանում կայացած համաժողովի ժամանակ: Ռեժիսորն առաջարկել է, որ սա կարող է լինել իր հաջորդ ֆիլմը:

Սկորսեզեն նաեւ հիացել է Պիեր Պաոլո Պազոլինիի «Մատթեոսի ավետարանով» եւ խոսել 1988 թվականի վիճահարույց «Քրիստոսի վերջին գայթակղությունը» էպոսի նշանակության ու «Հիսուսի կերպարի ուսումնասիրության հաջորդ քայլի» մասին, որը ներկայացված էր 2016 թվականի «Լռությունը» կարճ դրամայում:

ԼՈՒՐԵՐ

ՄԽԻԹԱՐՅԱՆԸ ՎԵՐԱԿԱՆԳՆՎՈՒՄ Է

Հայաստանի ֆուտբոլի ազգային թիմի նախկին ավագ Հենրիխ Մխիթարյանը շարունակում է վերականգնվել վնասվածքից:

Այս մասին գրում են իտալական ՁԼՄ-ները:

Նշվում է, որ «Ինտեր»-ի կիսապաշտպանը պատրաստ կլինի Չեմպիոնների լիգայի եզրափակիչին, որը կկայանա հունիսի 10-ին:

«Մանչեսթեր Սիթի»-ի դեմ սպասվող խաղից առաջ Մխիթարյանը վերականգնվում է ձախ ազդրի մկանային վնասվածքից:

Մխիթարյանը վնասվածքը ստացել էր Չեմպիոնների լիգայի «Միլան»-ի դեմ կիսաեզրափակչի պատասխան խաղում եւ փոխարինվել էր խաղի 44-րդ րոպեին:

ՍՐԲՈՒԿԸ՝ ԿԻՊՐՈՍՈՒՄ

Այս օրերին երգչուհի Սրբուկը իր հանգիստն է վայելում Կիպրոսում: Երգչուհին «Ինստագրամ»-ի «Սթորի» բաժնում հաճախ է կիսվում ծովափնյա լուսանկարներով երկրպագուների համար:

Սրբուկը լուսանկարներին կից գրել է. «Այս ճամփորդությունը դեռ երկար կհիշեմ, որովհետեւ եւ՛ շատ լավ էր կազմակերպված, եւ՛ թիմն էր լավը, մեկը մեկից գունավոր ու դրական օրեր ենք անցկացրել: Եւ ինչպե՞ս չսիրել այս ընկերական, հյուրընկալ, թեժ մթնոլորտով վայրը՝ գժական գեղեցիկ բնությամբ եւ օդում տիրող հանգստությամբ»:

ՀԵՐԹԱԿԱՆ ՀԱՂԹԱՆԱԿԸ

Բասկետբոլի Ա-լիգայում կայացել է 2-րդ հանդիպումը. նորից ասպարեզ է դուրս եկել «Ուրարտու»-ն:

Այս անգամ Միքայել Պողոսյանի սաները «Միկա» մարզահամալիրում հանդիպել են ՖԻՄԱ-ի հետ ու տարել 2-րդ հաղթանակը: Դիմակայությունն ավարտվել է 117:93 հաշվով:

Առաջին խաղում «Ուրարտու»-ն 97:94 հաշվով առավելության էր հասել «Արթիկ»-ի նկատմամբ:

Հաջորդ խաղը լինելու է հունիսի 1-ին՝ ժամը 19:30-ին, միմյանց դեմ մրցելու են ԲԿՄԱ-ն ու «Արթիկ»-ը:

● *Հունիսի 1-ին Գ.Սունդուկյանի անվան ազգային ակադեմիական թատրոնում տեղի կունենա «Մոխրոտը» ներկայացումը: Տոմսերի արժեքը՝2000-6000 դրամ: Սկիզբը՝ժամը 16:00-ին: Մինչեւ 4 տարեկան երեխայի մուտքն անվճար է:*

ԵՂԵ՛Ք ? ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

Էջը՝ ՌՈԶԱ ՊՈՂՈՍՅԱՆԻ

ՖԻՆԱՆՍՆԵՐ

ՀԱՐՑ. Ուսանող եմ: Ի՞նչ դայմաններով կարող եմ ստանալ ուսանողական վարկ:

Հայկ Այվազյան (19 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Ծրագրի շրջանակում ուսանողներին վարկեր են տրամադրվում 12 տոկոս տարեկան տոկոսադրույքով, որից 2 տոկոսը սուբսիդավորում է պետությունը, իսկ մեկ տարվա ընթացքում առավել բարձր առաջադիմություն ցուցաբերած ուսանողների դեպքում սուբսիդավորումը կկազմի 3 տոկոս: Վարկերը տրամադրվում են 10 տարի մարման ժամկետով՝ սահմանելով արտոնյալ ժամկետ՝ ուսումնառության ընթացքում առավելագույնը 4 տարվա համար, ինչը նշանակում է, որ այս ընթացքում մայր գումարի մարում տեղի չի ունենում, վճարվում են միայն տոկոսադրույքները: Յուրաքանչյուր ուսանողի հաշվով նախատեսված է առավելագույնը 1.800.000 դրամ՝ առավելագույնը 4 մասնաբաժնով, սակայն ոչ ավելի, քան 450 հազար դրամը՝ կախված յուրաքանչյուր մասնագիտության համար սահմանված ուսման վարձավճարի չափից:

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Ծրագրի մասին առավել մանրամասն տեղեկատվություն ստանալու համար կարող եք դիմել «Բնակարան երիտասարդներին» վերաֆինանսավորում իրականացնող վարկային կազմակերպություն:

ԱՌՈՂՋՈՒԹՅՈՒՆ

ՀԱՐՑ. Մեր ընտանեկան բժիշկը հրաժարվել է հաճախել հիվանդին: Դրա իրավունքն ունի՞:

Անի Հովակիմյան (44 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. ԱԱՊ բժիշկը չի գրանցում իրեն ընտրած եւ գրանցվելու նպատակով դիմող բնակչին, եթե՝

1) լրացել է ԱԱՊ բժշկի կողմից սպասարկվող բնակիչների առավելագույն թույլատրելի թվաքանակները,

2) բնակչի ներկայացրած փաստաթղթերը չեն համապատասխանում սույն կարգով սահմանված պահանջներին:

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». ԱԱՊ բժիշկը նեւ իրավունք ունի իրեն ընտրած եւ գրանցվելու նպատակով դիմած բնակչին չգրանցելու, եթե ԱԱՊ հաստատության եւ բնակչի մշտական բնակության վայրի միջեւ եղած հեռավորության պատճառով ԱԱՊ բժիշկը չի կարող մատուցել բժշկական օգնության հետեւյալ ծառայությունները՝տնային այցելություններ եւ հակահամաճարակային հսկողություն:

Հիմք՝ 30.03.2006թ. ՀՀ Կառավարության թիվ 420-Ն որոշում:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարն արվել է Երեւանում

Վաղ առավոտյան «Ժողովուրդ» օրաթերթի տեսախացիկը ֆիքսել է Երեւանի կենտրոնում՝ Աբովյան փողոցի հատվածում, աղբի կույտ: Դա այն հատվածում է, որտեղով անցնում են զբոսաշրջիկներ: Թե այսքանից հետո ինչ պատկերացում կկազմեն մեր քաղաքային իշխանությունների եւ քաղաքի մասին, դժվար է ասել:

Նկատենք, որ նման պատկեր կարող ենք հանդիպել օրվա տարբեր ժամերի Երեւանի փողոցներում:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայմամուլ» ՓԲԸ
հեռ. 45-82-00, 45-19-11

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ 52-5301

Առաքումը՝ **ԱՆՎՃԱՐ**:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ _____
Ազգանուն՝ _____
Առաքման հասցե՝ _____
Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ _____

Հեռ.՝(060) 490049
0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ա.

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Շիրակ	+ 8 + 12 +18 + 22
Կոտայքի լեռներ	+ 8 + 11 +17 + 20
Կոտայքի նախալեռներ	+13 + 16 +22 + 24
Գեղարքունիք	+ 7 + 11 +17 + 21
Լոռի	+11 + 16 +22 + 26
Տավուշ	+13 + 18 +25 + 28
Արագածոտնի լեռներ	+ 7 + 11 +15 + 19
Արագածոտնի նախալեռներ	+12 + 16 +20 + 25

Արարատ	+15 + 17 +25 + 28
Արմավիր	+13 + 16 +24 + 27
Վայոց ձորի լեռներ	+ 7 + 10 +17 + 20
Վայոց ձորի նախալեռներ	+15 + 17 +25 + 28
Սյունիքի հովիտներ	+17 + 21 +30 + 35
Սյունիքի նախալեռներ	+10 + 15 +24 + 27
Արցախ	+17 + 20 +27 + 32
Երեւան	+ 14+ 16 +25 + 27

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **30.5.2023**
Հասցեն՝ Գերաքրքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ.Հակոբյանի 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*